ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 661-Ա/2 **15.04.2022թ.**

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ» ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի մարտի 21-ի N 443-Ա հրամանով՝ «Հայկական ավանդական նվագարանների պատրաստման ուսուցման» ծրագրի իրականացման նպատակով

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1075. Մշակութային ժառանգության ծրագրի» «11005. Աջակցություն ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանմանը» միջոցառման «Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանում, ժողովրդական ստեղծագործության և արհեստագործության զարգացում, փառատոների կազմակերպում» տողով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը (այսուհետ՝ նախարարություն) նախատեսված գումարներից հատկացնել 3500,0 հազար (երեք միլիոն հինգ հարյուր հազար) դրամ՝ «Հայկական ավանդական նվագարանների պատրաստման ուսուցման» ծրագրի իրականացման ծախսերն ապահովելու համար:

2. Նախարարության ֆինանսաբյուջետային վարչության պետին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո 15-օրյա ժամկետում նախապատրաստել և Նախարարության գլխավոր քարտուղարի ստորագրմանը ներկայացնել սույն հրամանի 1-ին կետում նշված գումարը «Մշակութային կրթության աջակցության» հիմնադրամին հատկացնելու մասին պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

3. Նախարարության մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության պետին՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մարտի 16-ի թիվ 343-Ա/2 հրամանին և կնքվող պայմանագրին համապատասխան իրականացնել պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման նկատմամբ հսկողություն, բովանդակային հաշվետվությունների ընդունման գործառույթներ:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ա. Քոչարյանին:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

X